# Level Up+ 2000

**2 000 ֏**

**300**
**րոպե**
տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ և Կանադա, Ռուսաստան (բացառությամբ MTS), Հնդկաստան

**7 ԳԲ+**

**200**
**SMS**
տեղական բոլոր ցանցեր

Uplay 32 հեռուստաալիք առանց ՄԲ-ի գանձման

հավաքե՛ք
*551#

Level Up+ սակագնային պլանների նկարագրությունն ու մատուցման պայմաններ

Սակագնային պլանի ներառումները վավեր կլինեն 30 օր: Դրանք ամեն անգամ ավտոմատ կվերաակտիվանան 30 օրն ավարտվելուց հետո, և Ձեր հաշվից կգանձվի համապատասխան վճարը: Ներառումները կարող եք ստուգել` հավաքելով *133# և ընտրելով “Ներառումներ”:

30 օր անց բավարար գումար չունենալու դեպքում ներառումները չեն ակտիվանա, և Դուք կշարունակեք օգտվել Ucom ծառայություններից` ըստ Ձեր սակագնային պլանի հիմնական սակագների: Ներառումներն ակտիվացնելու համար անհրաժեշտ է կատարել ներառումների վճարի չափով լիցքավորում:

Ցանկացած պահի կարող եք փոխել Ձեր սակագնային պլանը մյուսով` պարզապես հավաքելով նախընտրած սակագնային պլանին անցնելու կոդը կամ հավաքել *550#  կամ զանգել 550 կարճ համարին և հետևել հրահանգներին: Նոր սակագնային պլանին անցնելիս նախկին սակագնային պլանով տրամադրված րոպեները, SMS-ները և ՄԲ-երը կզրոյանան, և կտրամադրվեն նոր սակագնային պլանին համապատասխան ներառումները: Նոր սակագնային պլան ընտրելու ժամանակ Ձեր հաշվին պետք է լինի բավարար գումար նոր սակագնային պլանի ներառումների ակտիվացման համար:

Նշված հավելվածներից ու կայքերից անխափան ու լիարժեք օգտվելու համար հարկավոր է հաշվին ունենալ դրական գումար: Այդ կայքերից ու հավելվածներից օգտվելիս հնարավոր է ինտերնետային այլ ռեսուրսների հետ տվյալների փոխանակում, որի համար գանձումը կկատարվի համաձայն սակագնային պլանի:

Խորհուրդ է տրվում օգտվել նշված հավելվածների թարմացված տարբերակներից, այլապես օգտագործման ընթացքում Ձեր հաշվից կարող է գումար գանձվել՝ ընթացիկ սակագնային պլանին համապատասխան:

Ներառված րոպեները չեք կարող օգտագործել տեսազանգեր կատարելու համար:

Ներառումների վերաակտիվացումը կսկսվի ակտիվ ներառումների ժամկետի ավարտից 10 րոպե առաջ: Նախքան ներառումների վերաակտիվացման սկիզբը Ձեր հաշվին պետք է լինի տվյալ սակագնային պլանի ակտիվացման համար անհրաժեշտ բավարար գումար: Սակագնային պլանի/փաթեթի շրջանակներում տրամադրված ներառումներից կարող եք օգտվել հաստատող SMS հաղորդագրությունը/ծանուցումը ստանալուց հետո:

Սակագնային պլանի ներառումները, բացառությամբ ռոումինգի համար նախատեսված ինտերնետ ծավալի, չեք կարող օգտագործել ռոմինգում գտնվելիս: Ինտերնետի տարածումը և դրա օգտագործումն այլ սարքավորումներից (Tethering) կարող է սահմանափակվել: Level Up սակագնային պլանը հնարավոր է օգտագործել միայն հեռախոսով:

*Բարեխիղճ օգտագործման սկզբունքի համաձայն Ucom-ը հնարավորություն է ընձեռում բոլոր բաժանորդներին հավասար օգտվել որակյալ շարժական կապի ծառայություններից: Եթե վավերականության 30 օրվա (հետվճարայինի դեպքում՝ 1 ամսվա) ընթացքում Դուք գերազանցել եք 200 ԳԲ շեմը, մաքսիմալ հասանելի արագությունը կսահմանվի 512 Կբիթ/վրկ: Կանխավճարային սակագնային պլանի դեպքում այդ արագությունը կգործի մինչև վավերականության ժամկետի ավարտը, իսկ հետվճարայինի դեպքում՝ մինչև հաջորդ ամսվա 1-ը:

Այդ արագությունը բավարար է, որպեսզի Դուք լիարժեք օգտվեք սոցիալական ցանցերից, մեսենջերներից և մի շարք այլ ծառայություններից:

Դուք կշարունակեք օգտվել ինտերնետից առանց մեգաբայթերի գանձման: Ի լրումն նշված հավելվածների առանց ինտերնետի մեգաբայթերի սպառման Ձեր Level Up փաթեթով հասանելի են լինելու www.ucom.am կայքը, ArCa, uPay, և Ucom հավելվածները, ինչպես նաև մի շարք կրթական կայքեր,

ինչպիսիք են www.kahoot.com, www.etwinning.net, www.emis.am, www.armedu.am, www.e-school.am:

Զվարթնոց օդանավակայանի Ucom սպասարկման կենտրոնից SIM քարտ ձեռք բերելու դեպքում Level Up+ 5000 փաթեթի 1-ին ակտիվացման համար կվճարեք 4500 դրամ:

Կանխավճարային Level Up+ սակագնային պլանով նոր քարտ ձեռք բերելիս, սակագնային պլանի ամսավճարից բացի անհրաժեշտ է վճարել նաև 100 դրամ Ակտիվացման վճար, որը կգանձվի քարտի վաճառքի պահին:

Ակտիվացման վճարը չի կիրառվում նախաակտիվացրած SIM քարտ ձեռք բերելու դեպքում:

**** Շարժական ինտերնետ ռոումինգում**

Level Up+ 5000 սակագնային պլանի բաժանորդներին ամեն ամիս կտրամադրվի ինտերնետի ծավալ ռոումինգում՝ 70-ից ավելի երկրում օգտագործելու համար:

Ներառված ինտերնետի ծավալը հնարավոր է օգտագործել ստորև նշված երկրներում համապատասխան օպերատորին միանալիս:

Ռոումինգում ինտերնետից օգտվելու ժամանակ Level Up+ 5500 սակագնային պլանով տրամադրվող ինտերնետի ծավալը սպառելուց հետո կապը չի ընդհատվի և Դուք կմնաք կապի մեջ համաձայն այդ երկրում տվյալ օպերատորի՝ ռոումինգում գործող ինտերնետի սակագնի:

Level Up+ 5000 սակագնային պլանով տրամադրվող ռոումինգում ինտերնետի ծավալը սպառելուց հետո Դուք կշարունակեք օգտվել անսահմանափակ ինտերնետից ռոումինգում՝ մինչև 128 կբ/վ արագությամբ: Այս արագությունը կպահպանվի, եթե նույնիսկ միանաք այն օպերատորին, որին հասանելի չեն ռոումինգում ինտերնետի ներառումները: Եթե ցանկանում եք ռոումինգում օգտվել գերարագ ինտերնետից, ապա պարզապես հավաքեք *133*31# և ապաակտիվացրեք ռոումինգում անսահմանափակ ինտերնետի հնարավորությունը, որից հետո կշարունակեք օգտվել ինտերնետից

համաձայն այդ երկրում տվյալ օպերատորի՝ ռոումինգում գործող ինտերնետի սակագնի:

Կարևոր կետեր և խորհուրդներ որոնք անհրաժեշտ է իմանալ ռոումինգում գտնվելիս:

**Շարժական ինտերնետ ռոումինգում առաջարկին հասանելի երկիր/օպերատոր**

- Ալբանիա Vodafone
- ԱՄՆ բոլոր ցանցերում
- Ավստրալիա Vodafone
- Ավստրիա Magenta և A1
- ԱՄԷ Du
- Արգենտինա Movistar
- Բահրեյն STC
- Բելառուս A1 և MTS
- Բելգիա բոլոր ցանցերում
- Բոսնիա և Հերցեգովինա BH Mobile
- Բրազիլիա VIVO
- Բուլղարիա բոլոր ցանցերում
- Գերմանիա Telekom և Vodafone
- Դանիա Telia
- Եգիպտոս Orange
- Էկվադոր Movistar
- Էստոնիա Telia և Tele2
- Թաիլանդ DTAC
- Թայվան Chunghwa Telecom
- Թուրքիա բոլոր ցանցերում
- Իռլանդիա բոլոր ցանցերում
- Ինդոնեզիա XL Axiata
- Իսպանիա Orange և Vodafone
- Իսրայել Partner
- Իտալիա բոլոր ցանցերում
- Իրան MCI
- Լատվիա LMT և Tele2
- Լեհաստան բոլոր ցանցերում
- Լիխտենշտեյն բոլոր ցանցերում
- Լիտվա Telia և Tele2
- Լյուքսեմբուրգ բոլոր ցանցերում
- Խորվաթիա բոլոր ցանցերում
- Կանադա Rogers և Bell
- Կիպրոս Epic և Cyta
- Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն Vodacom
- Հարավային Կորեա բոլոր ցանցերում
- Հնդկաստան բոլոր ցանցերում
- Հոնգկոնգ 3
- Հորդանան Orange
- Հունաստան բոլոր ցանցերում
- Հունգարիա բոլոր ցանցերում
- Ղրղզստան Magacom
- Ղազախստան Tele2 և Beeline
- Ճապոնիա SoftBank
- Մալայզիա բոլոր ցանցերում
- Մալթա բոլոր ցանցերում
- Մակեդոնիա A1
- Մեծ Բրիտանիա բոլոր ցանցերում
- Մեքսիկա բոլոր ցանցերում
- Մոլդովա Orange
- Մոնտենեգրո m:tel
- Նիդերլանդներ բոլոր ցանցերում
- Նոր Զելանդիա One
- Նորվեգիա բոլոր ցանցերում
- Շվեդիա բոլոր ցանցերում
- Շվեյցարիա բոլոր ցանցերում
- Շրի Լանկա Dialog
- Պերու Movistar
- Պորտուգալիա բոլոր ցանցերում
- Ուկրաինա Lifecell
- Ուրուգվայ Movistar
- Ուզբեկստան Mobiuz
- Չեխիա բոլոր ցանցերում
- Չիլի Movistar
- Չինաստան բոլոր ցանցերում
- Ռումինիա բոլոր ցանցերում
- Սաուդյան Արաբիա Zain
- Սերբիա A1 և Yettel
- Սինգապուր M1
- Սլովակիա բոլոր ցանցերում
- Սլովենիա բոլոր ցանցերում
- Վրաստան բոլոր ցանցերում
- Վիետնամ Viettel
- Տաջիկստան Tcell
- Քաթար Vodafone
- Քուվեյթ Ooredoo
- Ֆինլանդիա բոլոր ցանցերում
- Ֆրանսիա բոլոր ցանցերում